

ՅՈՐԵԼԵՆԻՅ ԳԻՐՔԸ՝ ՆԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Յորելենից գիրքը (Յորելանների գիրք, סֵפֶר הַיּוֹבְהֵלִים-Sepher hay-Yobhelim) կա-
նոնից դուրս մնացած մի գրութիւն է, որ ընդունուած է միայն Եթովպական Եկեղեցու
և Եթովպական փարաժքներից սերող հրեայ համայնքների կողմից¹: Եւ բնական է,
որ դրա լուսագոյն և հաւասարի օրինակը հաքելերէն «Գիրք Բաշխմանցն» է²: Սրա
հետ մեկտեղ գրքի յիշարակութիւնները հանդիպում են դեռեւս Որոգիւնէսի (185-254),
Եպիփան Կիպրացու (†403), Եւսեբիոս Շիրոնիմուսի (342-419) և այլոց գործերում:
Գիրքը կոչուել է նաեւ Փոքր Ծննդոց³, Մովսէսի Ապոկալիպսիս⁴ և այլ ձևերով: Օրինակ՝
Բրիտանական թանգարանում պահուող ասորերէն պարամիկը վերնագրուած է՝
«Նահապելյանների կանոնաց անուններն ըստ հրեական՝ Յորելենից կոչուող գրքի»⁵:
Անունների հանգամանքը շեշտուած է նաեւ մէկ այլ վերագրութեամբ՝ «Աղամի
դուստրների անունները»⁶:

Յորելենիցի Եթովպական օրինակները թարգմանուել են յունարէնից: Ի մասնաւորի
սա ապացուցում է մի շարք հունարանութիւնների առկայութեամբ, ինչպէս և
անունների յունական և ոչ թէ երբայական ձևերով⁷: Մինչև անցեալ դարի կէսերը
ԺԵ.-ԺԶ. հարիւրամեակների այս բնագրերը ամբողջական պահպանուած հագուագիւր
օրինակներ էին, մինչև որ 1947-1956 թթ. Բումբանում յայտնաբերուեցին Յորելենիցի
փասանիւնց նոր ձեռագրեր⁸, քանակութիւն, որ խօսում է գրքի կիրառուածութեան մասին:

Գրքի յիշուած գլուխները պարմում են Ծննդոցում և մասամբ Ելիցում յիշուած
դէպքերի մասին: Սակայն ի տարբերութիւն Ծննդոցի, ուր պարմողի անձնատրութիւնն
անյայտ է մնում, Յորելենից գրքում պարմողը հրեշտակն է, իսկ Մովսէսը՝ լսողն ու
գրառողը. «Եւ Հրեշտակը, [որ Սինայում] ներկայ էր, ըստ Տիրոջ խօսքի դիմեց Մովսէսին՝

1 Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Jubilees>:

2 *መጽሐፈ ኩፋሌ* (Mets'hafe Kufale), որից երկու օրինակ պահում է Փարիզի ազգային գրադարանում,
մէկական՝ Բրիտանական թանգարանում և Թուրինգէնի համալսարանի գրադարանում:

3 Այսպէս «փոքր» որոշիչը ցի վերաբերում գրքի ծաւալին: Իրականում այն կանոնում ընդգրկուածից
աւելի մեծ է: Ներագոյությունը «փոքրը» բացաւրում են պարմութիւնը փոքր շրջափուլերի (49-ական
տարի) բաժանելով և մանր-փոքր հանգամանքներին ուշադրութիւն դարձնելով:

4 Այս վերագրութեամբ գիրքը հանդիպում է քիզանդական մարկեմագիր Գէորգ Սինկելլուսի (†810
յետոյ) մօտ (Έκλογὴ Χρονογραφίας, i. 5) «ἐν τῇ Μεωσέως λεγομένη ἀποκαλύψει», որից վերցնում է նաեւ
Գէորգ Կեդրենուսը (մօտ. ԺԱ.-ԺԲ. դդ.):

5 Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Jubilees>:

6 Տե՛ս «*The Book of Jubilees or The Little Genesis*», Translated from the editor's ethiopic text and edited,
with introduction, notes and indices by R. H. Charles, London, 1902, xvii.

7 Տե՛ս անդ, էջ xxx.

8 Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Jubilees>:

ասելով. «Գրառի՛ր արարչութեան ողջ պատմութիւնը»⁹: Միւս փարբերությունն այն է, որ այսպէղ հեղինակը խստիւ հետևում է դէպքերի յաջորդականութեանը, ժամանակները բաժանում է յորելեանների եւ սկսելով արարչությունից (Ադամից)՝ հասնում է մինչեւ հրէաների մուրքն Աւարեաց երկիր՝ ճշգրիտ յիսուն յորելեան¹⁰:

Համարում է, որ այս գիրքն սրելոծուել է Ք. ծ. ա. 153-105 թթ. միջեւ ու կարող էր հիմնականում արարագրութեամբ լինել Հին Կրակարանից: Սակայն այսպէղ առաջ է գալիս Յորելենիցի ամենակարեւոր առանձնապարկությունը. երբեմն մարմանաշում է դէպքերի ժամանակը, քրում են անուններ եւ յիշարակում են այնպիսի հանգամանքներ, որոնք բացակայում են կանոնական գրքերում: Ներկայարար սա չի կարելի Աստուածաշնչի հասարակ ծաղկաբաղ համարել. Յորելենիցի հեղինակն ունեցել է բանաւոր կամ գրաւոր մի աղբյուր, որ որեւէ այլ երկով մեզ չի հասել, ուստի այս առմով Փոքր Ծննդոցը մեծապէս արժէքաւոր է:

Ուշագրաւ է, օրինակ, ջրհեղեղի որոշ հանգամանքներ բացայայտող հասարակութիւնը. «Եւ ջրերը բարձրացան երկրի վրայ. բոլոր բարձր լեռներից ջրերը տասնհինգ կանգուն վեր էին: Եւ տապանը տարուբերուելով քչւում էր ջրերի վրայ... Եւ տապանը զնաց ու կանգ առաւ Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի»¹¹ զազաթին... Եւ չորրորդ ամսուայ նորալուսնին մեծ անդունդի աղբիւրները փակուեցին եւ երկնքի հորդահոս դարպասները կողպուեցին... Եւ տասներորդ ամսուայ նորալուսնին երեւացին լեռների զազաթները»¹²: Փորձելիք սոյն հարումը համեմարել Աստուածաշունչ մարեանի հետ. «Եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի եւ ծածկէր զամենայն լերինս բարձունս որ էին ի ներքոյ երկնից: Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր: Եւ ծածկեաց զամենայն լերինս»¹³: Այլա՛ւ «Եւ զիջանէր տակաւ, երթայր ջուրն եւ թուլանայր յերկրէ եւ նուազէր ջուրն յետ հարիւր յիսուն աւուր: Եւ նստաւ Տապանն յեւթներորդում ամսեանն ի քսան եւ յեւթն ամսոյն ի լերինս Արարատայ: Եւ ջուրն երթայր եւ նուազէր մինչեւ ի տասներորդ ամիսն. իսկ յամսեանն մետասաներորդի,

9 Յորելենից գիրք, գլ. Բ. 1:

10 Հրէական աւանդութեան համաձայն՝ յիսուներորդ (յարկապէս այս փարիքն էր համարում յորելենական) փարին բոլորելիս մարդն իրաւունք էր ստանում փչելու պաշտամունքային գալարափողը՝ յորելը, որից եւ ծագում է յորելեան բառը: Սակայն Յորելենից գրքի պարագային ժամանակը յիսունականների չի բաժանուած, այլ 49-ական փարիների. իբրեւ կենտրոնական վիպական թիւ է ընտրուած եօթը եւ դրանից ծագող 49-ը (7x7). Կրնս http://ru.wikipedia.org/wiki/Книга_Иова: Ժամանակի չափման առումով Յորելենիցին նմանում են «Կրակ Ղեւեայ» գրութեամբ հանդիպող՝ «յերկրորդ յորելինին», «յեթներորդ եթներեկին» ձեւերը. Կրնս «Ձանգարան հին եւ նոր նախնեաց», Ա., «Անկանոն գիրք Հին Կրակարանաց», Վենետիկ, 1896, էջ 71:

11 Լուբար քաղաքնուն մէջ Լ-Ղ անցումը օրիպատի համարելով՝ կստանանք Ղուբար ձեւը, որ նոյն Մեծ Մասիսն է. Կրնս Թ. Յակոբեան եւ ուրիշներ, Հայաստանի եւ յարակից շրջանների քաղաքների բառարան, հար. 3, Երեւան, 1991:

12 Յորելենից գիրք, Դ. 26-30:

13 Աստուածաշունչ մարեան Հին եւ Նոր Կրակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997, Ծննդ. Է. 19-20:

որ աւր առաջինն էր ամսոյն՝ երեւեցան գլուխք լերանց»¹⁴: Միանգամից նկատելի է, որ ջրերի նուազելու դրուագը Յոբելենիցի մէջ Տապանի կանգնելուց յետոյ է, եւ Լուրարն իր գագաթին ընդունեց Նաւը նախքան կերելային մյուս լեռների գագաթները, մինչդեռ Աստուածաշնչում ջրերը նահանջում են, եւ լոկ դրանից յետոյ է Տապանը հանգիստ առնում լեռան վրայ, իսկ այնուհետեւ սկսում են երևալ լեռնագագաթները: Ներկայացնելով, եթէ հիմք ընդունենք Փոքր Ծննդոցը, որպէսզի Նաւը կանգ առնէր, խրուէր ամուր հողի մէջ, կան Լուրարի գագաթը պէտք է ջրից դուրս լինէր (սա հակասում է «*լեռներից ջրերը տասնհինգ կանգուն վեր էին*» փողին), կան, այս օրինակում փաստելիւ կանգունը ցոյց է տալիս այն չափը, թէ որքան էր Տապանը սուզուած ջրի մէջ, նաւագների լեզուով ասած՝ ջրագիծի (waterlinie) դիրքը: Այն հանգամանքը, որ Արարաբեան լեռները կան ջրից դուրս էին, կան այնքան մօտ էին ջրի մակերևոյթին, որ դրանց վրայով նաւելն անհնարին էր, նկատում է նաեւ Ռաբբի Փեթահիայի Ուղեգրութիւնից. «*Նոյն տապանը քշուեց այս լեռների միջեւ ու չկարողացաւ դուրս գալ*»¹⁵: Յովսէպոս Փլաւիոսը բերում է Նիկողայոս Դամասկացու խօսքերը, որն իր հերթին քաղել է մի երրորդ աղբիւրից. «*Նայաստանում կայ մի խոշոր լեռ Բարիս անունով, որտեղ, պարսպապատ համաձայն, շարերը ապաստանելով փրկութիւն են գրել ջրհեղեղի ժամանակ*»¹⁶: Այս՝ «շարերն ապաստանելով»-ի փրամաբանական շարունակութիւնը գրնում ենք անգլիական միջնադարեան մի աղբիւրում, որ իբրեւ հիմք մարնանշելով Բերտոսս Քաղղեացուն՝ պարսպում է, թէ ինչպէս ջրհեղեղից քիչ անց՝ «*սոսնախմբութեան օրը Նոյն հրաւիրել էր իր ընկերներից շարերին*»¹⁷: Երբ հաշուի ենք առնում, որ նոյն աղբիւրն իր փրկում նշել էր, թէ Տապանում եօթ հոգի է եղել¹⁸ (միայն Նոյի ընտանիքը՝ առանց «*ընկերների*»), քննարկում ենք, որ իրապէս հին աւանդութիւններում եղել են փարբերակներ, ուր խօսուել է Նայքում ապաստանողների մասին, դրանով իսկ վկայելով այդ երկրի՝ ամբողջութեամբ ջրով ծածակուած չլինելու օգտին:

Մեզ համար յարկապէս հետաքրքրական են Յոբելենից գրքում առկայ՝ Նայքին առնչուող փրկելութիւնների հարումները¹⁹, որ յաճախ նոյնանում են այլ պարականոնների համապարասխան դրուագների հետ: Առանձնակի ուշադրութեան են արժանի քումբանեան ձեռագրախմբի հետ գուգադիպութիւնները, որ գիտական հետաքրքիրների առիթ են հանդիսանում: Ինչպէս նկատում է Ծննդոցի քումբանեան պարականոնի (Genesis Apocryphon) ռուսերէնի վերածող Կ. Բ. Սարգսյան, Յոբելենիցի եւ 1947-ին առաջին քարայրում յայտնաբերուած բնագրի իրար մօտ լինելու

14 Ամո, Ը, 3-5:

15 Տե՛ս մեր՝ «Միջնադարեան մի ուղեգրական անդադարձ Նայաստանին» յօդուածը. «Էջմիածին», 2011, ԺԲ, էջ 104:

16 Ամբողջական հարումը և յղումը փնտրելու սոյն յօդուածի գ. ծանօթագրութեան մէջ:

17 Տե՛ս «An historical treatise of the travels of Noah into Europe: Containing the first inhabitation and peopling thereof». Done into English by Richard Lynche, Gent. London, 1601. էջ B iii (սլաք. 8):

18 Տե՛ս անդ:

19 Դրանցից մէկը փնտրելու վերոյիշեալ յօդուածում. անդ, էջ 105:

ապացոյցներից մէկը Լուբար լեռան յիշարակումն է²⁰։ Ընդ որում, այսպէս պէտք է նկատել, որ Քումրանի ձեռագրում մի անգամ նշում է. «Տապանն իջաւ Արարատեան լեռներից մէկի վրայ»²¹, իսկ միւս դէպքում՝ «...եւ սկսեցինք ես՝ [Նոյս,] եւ բոլոր որդիներս մշակել հողը։ Եւ Լուբար լեռան վրայ խաղողի մի մեծ այգի տնկեցի, եւ չորս տարի անց այն ինձ առատ գինի պարգեւեց»²²։ Իբրեւ փարբերութիւն պէտք է յիշել, որ չնայեաժ երկրորդ օրինակում Յորելենիցը եւ Քումրանի պարականոնը համընկնում են հիմնական գաղափարով, այն է՝ *Լուբարի վրայ խաղողի այգի տնկուեց*, առաջին հարումաժի պարագային քումրանեանը բաւարարում է վերոբերեալ՝ «Արարատեան լեռներից մէկի վրայ» փողով, մինչդեռ Փոքր Ծննդոցը մասնաւորեցնում է՝ «Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի գագաթին»։

Ինչպէս նշում է Ծննդոցի Պարականոնի եւ Յորելենիցի համեմափող Դանիէլ Մաշիէլան՝ երկու բնագրերի համընկնող փոփոխութիւնները վեցն են՝ ա. Նոյի կնոջ յիշարակութիւնը *Բաթենոշ* (*Բեթենոշ*) ձեւով (այս պնդումը հակասում է հայկական աւանդութեանը), բ. ողջակէզի մարտոցում ջրհեղեղից յետոյ, գ. Լուբարի վրայ խաղողի այգու հիմնումը, դ. հողերի բաշխումը Նոյի որդիներին, ե. Նէբրոնի կառուցումը, գ. Արրահամի եւ Սառայի եօթնամեայ ժամանակագրութիւնը Եգիպտոսում գտնուելու ընթացքում։ Ներագոյթողներն այս փոփոխութիւնները բացատրում են փարբեր, երբեմն հակասական եղանակներով, որոնցից հիմնականները հետեւեալներն են. ա. Յորելենիցն աղբիւր է ծառայել քումրանեանի համար, բ. քումրանեան պարականոնը աղբիւր է ծառայել Յորելենիցի համար, գ. երկուսի աղբիւրը մի երրորդ՝ չպահպանուած բնագիր է²³։

Առանձնակի հարկ է անդրադառնալ Դանիէլ Մաշիէլայի՝ երկու բնագրերի համընկնումների մասին խօսքի առաջին կէտին. «The name of Noah's wife, *Batenosh* (1Qap-Gen 5.3, 8; Jub 4:28)»²⁴, որ, ինչպէս նշեցինք, հակասում է Նոյի փիկնոջ մասին հայկական աւանդութիւններին, համաձայն որոնց փիկինը պիտի կոչուէր Նոյնմգար²⁵։

Իրականում հետագոյթողը վրիպել է. *Բաթենոշ*-ը Նոյ նահապետի մայրն էր, Ղամնքի կինը։ Եւ երկու բնագրերում հենց այս միտքն է. «Ղամնքը կնութեան առաւ մէկին, որի անունն էր Բաթենոշ»²⁶. «Եւ ես՝ Ղամնքս, փխրելով գնացի Բաթենոշի՝ կնոջս մօտ»²⁷։ Այսինքն՝ բնագրերի եւ հայկական աւանդութեան նիւթում հակասութիւն

20 "Апокриф Книги Бытия", перевод и вступительная статья К. Б. Старковой- փնն <http://www.biblicalstudies.ru/Lib/Kumran/1QGenAp.html>. հմմտ. The Genesis Apocryphon (1Q20): A Reevaluation of its Text, Interpretive Character, and Relationship to The Book of Jubilees, A Dissertation Submitted to the Graduate School of the University of Notre Dame in Partial Fulfillment of the Requirements of the Degree of Doctor of Philosophy by Daniel A. Machiela, B.A., M.A., 2007, էջ 46:

21 Genesis Apocryphon, սիւնակ Ժ., 12:

22 Genesis Apocryphon, սիւնակ ԺԲ., 13:

23 Տնն "The Genesis Apocryphon (1Q20): A Reevaluation of ...", էջ 32 եւ յջ.:

24 Ամր, էջ 32:

25 Տնն *Նր. Անանեան*, Նայոց անձնանունների բառարան, հար. Դ., Երեսան, 1948, էջ 82-83:

26 Յորելենից Դ., 28:

27 Ծննդոցի Պարականոն, սիւնակ Բ. 3:

գոյություն չունի: Դեռ ասելին՝ Յոբելենիցում Նոյի կնոջը Կնոնը անունը հնչյունաբանորեն գրեթե նոյնական է հայկական առանդության մեջ պահպանուած ձևի հետ. անգլերեն փարբերակում փիկնոջ անունը *Ėmzârâ* է, ռուսերենում՝ *Емзарар*²⁸: Փաստորեն, բացակայում է միայն հայերեն փարբերակի «նոյ»՝ առաջին վանկը:

Միս կողմից երբեմն կարծիքներ են հնչել, որ Նոյի կինը Ծննդ. Դ. 22-ում («Բերեշիթ Ռաբբա» 23, 4) յիշուած **Նոյեմա**-ն է²⁹: Եթե ընդունենք, որ սա ճիշտ պնդում է, աստուածաշնչեան եւ երկու պարականոններում հանդիպող ձևերը համադրելով կարող ենք փնտնել, որ հայկական **Նոյեմգար**-ն իր մեջ ամփոփում է թէ՛ մէկը, թէ՛ միւսը, ուստի կարելի է կարծել՝ սկզբնական-ամբողջական փարբերակին առաւել մօտ պիտի լինի:

Նայքին վերաբերող հարուածները ուշագրաւ համարելով ոչ միայն հոգեւոր-կրօնական փեսակէտից, այլ նաեւ գուր ճանաչողական՝ նպարակայարմար գրանք քաղուածաբար ներկայացնել համապարասխան կտորները, որոնց թարգմանութիւնը կարարել ենք անգլերէն եւ ռուսերէն³⁰ փարբերակների համադրութեամբ: Անգլերէն փարբերակում առկայ է փողարման համարակալում, որ կիրառել են որոնման գործը դիւրացնելու համար: Արժէքատու են նաեւ անգլերէնի թարգմանիչ դր. Չարլզի ծանօթագրութիւնները, որ նոյնպէս ընդգրկել ենք՝ ի նկատ առնելով դրանց կարեւորութիւնը: Չարլզի ծանօթագրութիւնները համարակալուած են արաբական թուանշաններով եւ գեղեղուած են փողարակում, իսկ մեր ծանօթագրութիւնները այբբենական համարակալմամբ՝ նիւթի վերջում:

ԳԷՈՐԳ ՄԱՂՈՅԵԱՆ

28 Տե՛ս Յոբելենից Դ., 33:

29 Տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Naamah> հմմտ. <http://ru.wikipedia.org/wiki/Hoema>

30 Անգլերէն ըստ վերնում նշուած՝ «*The Book of Jubilees or The Little Genesis*» գրքի, իսկ ռուսերէն փարբերակը՝ «Книга Юбилеев», введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. — Казань, 1895. վերցրել ենք՝ http://krotov.info/library/bible/comm3/vz_apokr1.htm հասցէից:

«ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ՅՈՐԴԱՆԵՆԻՅԱՆ»

ԿԱՄ

«ՓՈՔՐ ԾՆՆԴՈՑ»

(Հատուածներ)

[Գլուխ] Գ. 25-26

Եւ նա [Ենոքը] անուշաբոյր խունկ ծխեցրեց, որ հաճոյ եղաւ Տիրոջը Միջօրէի³¹ լեռան վրայ: Որովհետեւ Տէրը չորս [հաճոյ] վայր ունի երկրի վրայ. Եղեմական այգին, եւ Արեւելքի լեռը, եւ լեռն այս, որի վրայ [գտնուում] ես այսօր՝ Սինայը, եւ Սիոն լեռը, որ յանուն երկրի օրհնութեան կօրհնուի նոր արարչութեան ժամանակ³¹:

[Գլուխ] Ե. 27-28

Եւ ջուրը ծածկում էր երկրի մակերեսը չինգ ամիս՝ հարյուր յիսուն օր: Եւ տապանը³² գնաց ու կանգ առաւ Արարատի լեռներից մէկի՝ Լուրարի գագաթին³²:

31 Incense of the sanctuary, or "incense in the sanctuary." Sweet spices acceptable before the Lord on the Mount. bcd= "acceptable before the Lord on the mountains of the South" (qatr). Սակայն qatr բառի կիրառութեան օրինակ որեւէ այլ տեղ չկայ: a օրինակում դրա փոխարէն գրուած է badabr: Ես այն բնորոշել եմ իբրեւ զĕlātê=«անուշաբոյր խունկեր»-ի եղծուած ձեւ: Այս բառերը կապուում են Ելք Լ., 7-ի հետ:

Լեռան վրայ. a այսպէս: bcd «Միջօրէի լեռան վրայ» (or South.-կամ Հարաւի): Տե՛ս յաջորդիւ:

Այս վայրերից երեքը կապուած են մարդկութեան պատմութեան երեք բեկումնային պահերի հետ. Եղեմական այգին իբրեւ մարդու առաջին օրրան, Սինայ լեռը, ուր տրուեց Օրէնքը, եւ Սիոն լեռը կրօնապետութեան կենտրոն: Այս երեքը դարձեալ մատնանշուում են Ը. 19-ում: Թէ որն է Արեւելքի լեռը՝ անկարող եմ որոշել: ZDMG-ի («Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft»-Նաւդէս Գերմանական Արեւելեան ընկերութեան.-Գ. Մ.) xi. 730-733 էջերում Ռապոպորտն այն կարծիքն է յայտնում, թէ խնդրոյ առարկան Եփրատի լեռն է (Յեսու Նաւեայ Ժէ. 15): Նա նշում է, որ սա Պաղեստինի ամենաարեւելեան լեռն է, որ ներառում է Սամարացիների, Գադիզին [լեռան], Սիկիմացոց եւ Սամարիոյ սրբութիւնները, որ Արրահամն ու Յակոբն օրհնեցին (Ծննդ. ԺԲ. 7, ԼԳ. 20)... Սակայն նման մեկնարանութիւնը ենթադրում է, որ հեղինակ պիտի լինի որեւէ սամարացի, որով եւ բացառում է. բնագրական նիւթը հակասում է դրան: Բացի այդ. Սիոնի մատնանշումը եւս այդ ճանապարհով է ուղղորդում: Որոշակի հաւանականութիւն կայ Rönsch-ի (Das Buch der Jubiliden, 1874.-Գ. Մ.) առաջարկում (էջ 505-6), թէ Արեւելեան լեռան տակ պէտք է հասկանանք Արարատի գագաթներից մէկը, ուր կանգ առաւ տապանը եւ Նոյր ողջակէզ մատուցեց՝ իմա՝ Լուրարը, որովհետեւ այն գտնուում է Պաղեստինից հիւսիս-արեւելք, եւ այս չորս վայրերի հետ կկապուեն Ադամի, Նոյի, Մովսէսի եւ Դաւթի անունները: Տե՛ս viii. 19 (ձան.): Միւս կողմից հնարաւոր է, որ այստեղ գործ ունենք այն լեռան հետ, ուր ներկայ հատուածում Ենոքը խունկ ծխեցրեց: Եթէ հիմնուենք «Die Schatzhöhle» (Գաւնաւարան.-Գ. Մ.) եւ Ադամի ու Եւայի գրքի (Ադամգիրք) վրա, Սեթին եւ իր սերունդներին բնակութեան տրուեց Եփրատի մերձակայ լեռը, չիջնելով դաշտավայր, չխառնուել Կայէնի սերունդների հետ: Ադամի պատուիրանին հետեւել են մինչեւ Յարէղ: Այս լեռն իրաւամբ կարող է նկատուել որպէս Արեւելքի լեռ: Կամ Արեւելքի լեռն այն է, որ նկարագրւում է իբրեւ Տիրոջ Գահ երկրի վրայ, Ենոք xviii. 6-9, xxiii. 1-3, որի վրայ կրազմի Տէրը, երբ այցելի երկիր: Այն Եղեմական այգու հարեւանութեամբ գտնուող լեռներից ամենաբարձրն է: Հմմտ. Եթ. Ենոք xxxii 1-2, lxxvii 3-4: Փաստ է, որ Ենոքի գրքում Եղեմական այգին հիւսիս-արեւմուտքում է, մինչդեռ Յորդանիցում՝ արեւելք. տե՛ս viii. 16». «The Book of Jubilees or The Little Genesis», էջ 39-40:

32 Ծննդ. Է., 4: Այս Լուրար (Lûbâr) անունը դարձեալ հանդիպում է Է. 1-ում (տե՛ս ձան.):

[Գլուխ] Զ. 1, 11

Եւ երրորդ ամսուայ նորալուսինն նա ելաւ Տապանից եւ այդ [Լուբար] լեռան վրայ զոհասեղան շինեց³³:

Յանուն սրա նա խօսեց քո՝ [Մովսէսի] հետ, որպէսզի դու եւս Իսրայէլի որդւոց հետ միասին [Սինայ] լեռան վրայ այս ամսում երդմամբ ուխտ հաստատես եւ ցօղես արեամբ ի սէր բոլոր բառերի, որ [առկայ են] ուխտում, որը նրանց հետ հաստատեց Տէրը ամենայն ժամանակների համար:

[Գլուխ] Է. 1-2, 13-18

Եւ այս յօբելենի առաջին տարուայ եօթներորդ շաբաթում [1317 Ք. ծ. ա.]³⁴: Արարատի լեռներից մէկի՝ Լուբարի վրայ, ուր կանգ էր առել տապանը, նոյր խաղողի վազերը տնկեց: Եւ նրանք բերք տուեցին չորրորդ տարում [1320 Ք. ծ. ա.]³⁵: Եւ նա խնամում էր իր³⁶ բերքը. եւ հաւաքեց այդ տարուայ եօթներորդ ամսում: Եւ խաղողից նա գինի պատրաստեց եւ լցրեց անոթն ու պահեց մինչեւ հինգերորդ տարին [1321 Ք. ա.], մինչեւ առաջին ամսուայ լիալուսնի առաջին օրը...

Եւ Քամն իմացաւ, որ հայրն անիծել է իր կրտսեր որդուն՝ [Քանանին], եւ վրդովուեց, որ հայրն անիծել է զաւակին եւ բաժանուեց իր հօրից՝ ինքը եւ իր զաւակները՝ Քուշը, Մեսորեմը, եւ Փուղը, եւ Քանանը: Եւ իր համար մի քաղաք կառուցեց, որ կոչեց իր կնոջ անուամբ՝ Նէելաթամաուկ (Ne'elâtamâûk): Եւ Յաբեթը տեսաւ եւ նախանձեց եղբորը եւ նոյնպէս քաղաք կառուցեց եւ կոչեց իր կնոջ անունով՝ Ադաթանեզէս (Adâtamênês): Եւ Սէմն ապրեց հօր մօտ եւ մի քաղաք կառուցեց հօր մօտ՝ լեռան վրայ եւ կոչեց իր կնոջ

Միդրաշեան Նոյի գրքում (տե՛ս գրքի Յաւելուած I-ը) այն յիշուած է հետեւեալ կերպ «וַיִּתֵּן מִיָּדָאֵם מִיֶּיֶךָ וַיִּתֵּן מִיָּדָאֵם מִיֶּיֶךָ»: Այս տարբերակն ազատ կերպով վերաշարադրել է Եպիփան [Կիպրացին]։ «μετὰ δὲ τὸν κατακλυσμὸν ἐπιστάσης τῆς λάρνακος τοῦ Νῶε ἐν τοῖς ὅπσει τοῖς Ἀραραὶ ἀνὰ μέσον Ἀρμενίων καὶ Καρδόνεων ἐν τῷ Λουβάρ ὅρει καλουμένῳ» (Ընդդէմ հերժուածոց, I հատ. i. 4): Ինչպէս յայտնում է Նիկողայոս Դամասկացին (Յովսեփոս, Հրէական հնախօսութիւն, i. 3. 6), մի տեղական աւանդութեան համաձայն Տապանը կանգ առաւ Հայքի Բարիս կոչուած մի հսկայ լեռան վրայ՝ Minyas-ի վերեւում³⁷: Պրոֆ. Սէյյըր («Journal of Royal Asiatic Society», xiv. p. 389 note) կարծիք է յայտնում, թէ Բարիսը մեր շարադրանքի Լուբարն է, հաշուի առնելով, որ ե՛ւ Եպիփանը, ե՛ւ Սինկելլիոսն ասում են, որ այն Հայքի սահմանին է: Նրան եմ պարտական նաեւ հետեւեալ դիտարկման համար, ուր նա մեկնում է Լուբարի ԼՈՒ վանկը: «Վանայ սեպագիր արձանագրութիւններում Լուլուն Հայաստանի եւ Քրդստանի միջեւ ընկած այն վայրն է, որ ասորերէն կոչւում է Ուրարտու (Արարատ), եւ գրեթէ հաստատա ասորական գրութիւնների Լուլուրին կամ Լուլուվին է, ուր գտնվում էր Նիգիր լեռը, որի գագաթին կանգ առաւ քաղաքական Նոյի Տապանը»։ էջ 48:

33 Երրորդ ամսուայ նորալուսինն: Ծննդ. Ը., 19-ի առնչութեամբ Լազարդի մօտ այս թիւը կրկնում է. «ἐν μιᾷ τοῦ μηνὸς τοῦ τρίτου»: Արարատի եւ Սինայի զուգահեռների համար տե՛ս 11-րդ հատուածը: Այս օրն է մատնանշում նաեւ Արրահամի պարագային (ԺԴ. 1 եւ 9), ինչպէս եւ այս օրը Յակոբն սկսեց շարժուել դէպի Եգիպտոս ԽԴ. 1:

Եւ այդ լեռան վրայ զոհասեղան շինեց. հմմտ. Ծննդ. Ը., 20: Լեռը Լուբարն է: Ըստ «Քերեչիթ Ռար-բա» [ժողովածու]ի (34) Նոյ [նահապետ]ն այս լեռնը՝ Երուսաղէմում էր խոստացել: Ծննդ. Ը. 20-ին առնչուող Թարգում Զոնաթանի մէջ տեղը չի նշւում, սակայն սեղանը նոյնացւում է այն սեղանի հետ, որ Ադամն էր կերտել:

անունով՝ (*Sēdēqēṭēlēbāb*)³⁴: Եւ այս երեք քաղաքները Լուբարի մերձակայքում են. Սեդեքեթեղեբաբը (*Sēdēqēṭēlēbāb*) հանդիպակաց է արեւելեան կողմից, Նաելթամաուկը (*Na'eltamā'ūk*) հարաւային կողմում է, Ադաթանեզսը (*Adatanēsēs*)՝ արեւմուտքում³⁵:

[Գլուխ] Ը. 19-21

Եւ նա իմացաւ, որ Եղեմական այգին ամենայն սրբությանց սրբությունն է եւ Տիրոջ բնակութիւնը, իսկ Սինայ լեռն՝ անապատի կենտրոնը, իսկ Սիոն լեռը՝ աշխարհի պորտի կենտրոնը. իրար հանդիպակաց այս երեք սրբություններն ստեղծուեցին իբրեւ սուրբ վայրեր: Եւ նա փառաւորեց աստուածների Աստծուն եւ յաւիտենից Տիրոջը, որ Տիրոջ խօսքն իր շուրթերին դրեց[...]: Եւ նա իմացաւ, որ երանելի եւ օրհնեալ ժառանգութիւն կլինի Սէմի, նրա որդիների ու յետագայ սերունդների համար՝ ամբողջ Եղեմական աշխարհը եւ³⁶ Կարմիր ծովի աշխարհը, համայն Արեւելեան աշխարհը, Հնդկաստանն իր լեռներով, Բասանի³⁷ ողջ երկիրը, Լիբանանի ողջ երկիրը եւ Կափթորի³⁸ կղզիները եւ բոլոր լեռները Սանիր եւ Ամանա³⁹ եւ ողջ երկիրը Ելամի, Ասուրի, եւ Բաբելի, եւ Սուգանի, եւ Մադայի⁴⁰, եւ ողջ Արարատի երկիրը, եւ ծովին յարակից ողջ տարածքը, եւ Ասուրի լեռներից անդին՝ դէպի Հիւսիս ողջ երկիրը, օրհնեալ եւ ընդարձակ տարածքը եւ ինչ որ նրանում կայ. եւ բարի է³⁵:

[Գլուխ] Ժ. 15-16, 18-19

Եւ Նոյը ննջեց իր հայրերի հետ եւ հուղարկաւորուեց Լուբար լեռան վրայ՝ Արարատի երկրում⁴¹...

Եւ երեսունչորսերորդ⁴² յօդերէնի՝ առաջին տարուայ երկրորդ շաբաթում Փա՛ղեկը կնութեան առաւ Լօմնա անունով մէկին՝ Սինաարի դստերը: Եւ կինն իրեն որդի պարգեւեց չորրորդ տարուայ այս շաբաթում. եւ ինքը նրան Ռազել կոչեց, որովհետեւ ասաց. «Ահա մարդկանց որդիները յիմարացան չար մտայղացմամբ, թէ իրենց համար քաղաք եւ աշտարակ կկառուցեն Շինարի երկրում եւ Արարատի երկրից⁴³ անցան դէպի արեւելք, դէպի Շինար»,- որովհետեւ իր օրերում նրանք քաղաք եւ աշտարակ կառուցեցին, ասելով՝ «Մենք դրանով երկինք կբարձրանանք»⁴⁴:

34 «Եւ Սէմն ապրեց հօր մօտ». սա Սէմի որդիական սէրն ի ցոյց դնելու համար է:

35 Դ. 26-ում տեսանք, որ երկրի վրայ սուրբ վայրերը չորսն են. այս հատուածից իմանում ենք, որ դրանցից երեքը Սէմի մասում են: Հետեւաբար չորրորդը կամ Յաբեթի, կամ Քամի ժառանգութեան մէջ պիտի լինի: Այս իսկ պատճառով Արեւելքի լեռ կարող է դիտուել Արարատը՝ Յաբեթի տարածքում, կամ մեծ լեռը հարաւ-արեւելքում, որ կպատկանի Քամի բաժնին (հմմտ. Եթովպական Ենոքի գիրք xxv. 3, xxv. 3): Տե՛ս նաեւ Դ. 26-ի ծանօթագրութիւնը: Վերջին լեռը Կրակի (Այլուպ) լեռնաշղթայի գլխաւորն է (Եթ. Են. xviii. 9, xiv. 1), եւ այդպիսի մի լեռնաշղթայ կայ Քամի մասում. տե՛ս ներկայ հատուածի 22-ը»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. «Միջօրէի» բառը չկայ Չարլզի թարգմանութեան մէջ. րեն իր 31-րդ ծանօթագրութիւնը:

Չարլզի եւ Սմիթնոլի թարգմանութիւնները նոյնական են. «Lord has four places on the earth, the Garden of Eden, and the Mount of the East...» եւ «ибо четыре места Божий <այսպէս> существуют на земле: рай Едем, и гора востока»: Սակայն անկի վաղ՝ 1888 թուականի անգլերէն թարգմանութիւնը փափրկում է՝ «the garden of Eden and the hill of the east in it». րեն The Book of Jubilees, Translated from the Ethiopic by Rev. George H. Schodde, Ph. D. Professor in Capital University, Columbus, Ohio, Oberlin, Ohio: E. J. Goodrich, 1888, էջ 17: Զորջ Սքոդդի հարուածն առաջինը փափրկում է նրանով, որ «hill»-ը ոչ այնքան բարձր գոյացութիւն է՝ «բլուր», եւ ոչ թէ «լեռ». «high land: an area of land, usually rounded in shape, that is higher than the surrounding land but *not as high as a mountain*» (ընդգծումը մերն է.-Գ. Մ.). րեն Microsoft Encarta, 2006. հմմտ. A. S. Hornby, Oxford student's Dictionary of Current English, Oxford University Press, 1984: Բացի այս «hill of the east in it» կապակցութեամբ մարմանաւորում է, թէ Արեւելքի լեռը (անգլերէնում փոքրաբարձ է) գտնւում է դրախտում, բառացի՝ «Եդեմի այգին եւ Արեւելքի բլուրը նրանում»: Ծանօթագրութեան մէջ Սքոդդը նշում է, թէ՝ «սուրբ վայրերից առաջին երկուսի րեղը հնարաւոր չէ ճշտել, եւ անգամ Յոբելէնիցի հեղինակը, թերեւս, որոշակի գաղափար չունի այս առթիւ». րեն էջ 17՝ ծան.:

բ. Ռոսերէն փափրկելով «նա» դերանունն է, իսկ «տապանը» փակագծում է: Ներքեւ ինքն անգլերէն փափրկելով:

գ. Զօն Սալվերդայի պնդմամբ՝ Երեմիայի մօտ հանդիպող եւ Արարարի հետ յիշարակուող Minni (մարերը), Յովսէպոսի շարադրանքում յունական ձեւով վեր են ածուել Minyas-ի. րեն <http://hope-of-israel.org/minyans.html>: Baris above Minyas կապակցութեան մէջ, մեր կարծիքով, Minyas-ը պէտք է րեղ մարմանաւոր, ու թերեւս պէտք է կարդալ, ասենք, «Բարիս»՝ մարերի [ներկայիս բնակավայրից] վերեւ» ձեւով: Ղէտք է նկատել նաեւ, որ **Լուրսար** եւ **Բարիս** րեղանունների մէջ արմատներից մէկը՝ «բար»-ը, կրկնում է:

Այժմ թերեւս րեղին է, որ յիշենք Յովսէպոս Փլաիոսի համապարասխան հարուածը. «Այս ջրհեղեղի եւ տապանի մասին յիշատակում են բոլոր նրանք, որոնք գրել են բարբարոսների պատմութիւնները. նրանցից է Բերոսոս Քաղզէացին, որը պատմելով ջրհեղեղի ժամանակ տեղի ունեցած դէպքերի մասին, այսպիսի բաներ է գրում. «Ասում է, թէ մինչեւ հիմա էլ նաւի մի մասը գտնւում է Հայաստանում, Կորդուաց լեռների մօտ, եւ որ ոմանք [նրա վրայից] պոկելով կուպրի կտորներ են բերում, եւ մարդիկ դրանք կրում են իրենց վրայ իրենւ հուռութք»: Դրանց մասին յիշատակում են նաեւ Հիերոնիմոս Եգիպտացին (Նիերոնիմոս Եգիպտացու մասին ուրիշ

ոչ մի փոփոխություն մեզ չի հասել.- Ս. Կ.), որը գրել է *Փիլիսիկեան Հնախոսութիւնը*, եւ *Մնասէսը* (Մնասէս: Լիկիայում /Փոքր Ասիա/ ծնունդ մարտնագիր, որն աշակերտել է Երարոսթենեսին, արեղծագործել է Ք. ծ. ա. III դարի վերջերին.- Ս. Կ.) եւ *Հատ ուրիշներ*, *ինչպէս նաեւ Նիկողայոս Դամասկացին* (Նիկողայոս Դամասկացին եղել է Նրէասպանի Ներովդէս թագաւորի մարտիմն ու կենսագիրը, որը միաժամանակ գրել է ընդհանրական պատմություն: Այս վերջինը Յովսէպոսի գլխաւոր աղբիւրներից մէկն է եղել.- Ս. Կ.) *իր իննսունվեցերորդ գրքում պատմելով այդ բոլորի մասին, այսպէս է ասում. «Մինիաս [Երկրից] (Մինիաս երկիրը Ասորւածաշնչում «Մինի» ձևով (աստուրական սեպագիր արձանագրություններում՝ «Մաննայ») յիշարակում է միշտ Արարաթի հետ կապում.- Ս. Կ.) վերեւ՝ Հայաստանում կայ մի խոշոր լեռ Բարիս անունով, որտեղ, պատմութեան համաձայն, շատերը ապաստանելով փրկութիւն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մէկը տապանի վրայ տարուելով, իջել է գաղաթին, եւ տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանուել են: Սա հաւանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսէսը՝ հրէաների օրհնագիրը»*. Եւս «Հին յունական աղբիւրներ», Ա., *Յովսէպոս Փրախոս, Դիոն Կասսիոս*, առաջարկում են ծանօթագրություններ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1976, «Նրէական հնախոսություն», Գիրք Առաջին, էջ 55:

Յովսէպոսի շարադրանքի առնչութեամբ կարեւոր դիտարկում է անում Գեորգ Արզաբեկեանը. «Մ. թ. առաջին դարում ապրած հրէական ծագումով այս յոյն մարտնագիրը [Յովսէպոս Փրախոսը] իր «Նրէական հնություններ» աշխատությունում (գիրք 1, գլուխ 3) գրում է. «Այն բանից յետոյ, երբ տապանն իջաւ Հայաստանում գտնուող մի լեռան վրայ... Նոյը բացեց տապանը, դուրս եկաւ իր ընտանիքի հետ միասին... Հայերն այդ տեղը մինչեւ օրս կոչում են Ապորատերիոն, որովհետեւ տապանն այստեղ գտաւ իր փրկութիւնը: Եւ մինչեւ օրս էլ նրանք ցոյց են տալիս տապանի բեկորները»: Ֆրանսիացի հայագետ Սէն Մարտէնը դեռեւս անցեալ դարի սկզբում նկարել է, որ յունարէն Ապորատերիոն (Αποβατήριον) փոխանունն այլ բան չէ, քան Նախիջեւանի հայերէն անունը: «Ապորատերիոն» բառը յունարէն ուղանակում է «Իջեւանաւորելի»: Նոյն առաջին անգամ է իջել Նախիջեւանում, եւ հայերն էլ իջեւանաւորելին կոչել են Նախիջեւան: Յունական սկզբնաղբիւրը մեզ է հասցրել շուրջ 2000 տարի առաջ հայերի շուրթերից լսած մի փոփոխական թարգմանություն, որը հայերէն բառերի ժողովրդական ստուգաբանութեան մեզ յայտնի առաջին դէպքն է: Սա միաժամանակ հայկական ժողովրդական բանահիւստութեան ամենավաղ գրանցումն է, աւելի վաղ, քան Խորենացու, Փաւստոսի եւ այլոց գրանցումներն են»։ Գ. Արզաբեկեան, Հայ տապագրութեան նախապատմություն, Երեւան, 2001, հմմտ. էջ 28:

Այսպէս կարելի է միայն յատկել, որ դեռեւս Սէն Մարտէնից (1791-1832) առաջ Ապորատերիոն փոխանունն ծագումը յայտնի էր: Ի մասնաւորի կարելի է յիշել Յովսէպոսի գրքերի անգլերէն եւ Խորենացու լատիներէն թարգմանող Ուիլյամ Ուիլքինսոնի (1667-1752) խօսքերը. «Այս Αποβατήριον-ը կամ «Էջբի վայրը» սոյն քաղաքի հայերէն անունն պարզ փոխադրումն է: Պատմութեան գրքում այն հանդիպում է Նախուանա

ձեռով, իսկ Հայ պատմիչ Մովսէս Խորենացին այն կոչում է Իջեւան, սակայն տեղում այն անուանում են Նախիջեւան, որ նշանակում է Իջնելու առաջին տեղը: Եւ լեռան մօտ, որի ստորոտին [Նախիջեւանը] կառուցուեց իբրեւ Ջրհեղեղից յետոյ առաջին աւան կամ քաղաք, այն մի յաւերժ յուշարձան է [ի յիշատակ] տապանի միջոցով Նոյեան փրկուելու: Տե՛ս նաեւ Հնախ. գ. 20, հատուած 2 եւ Մովսէս Խորենացի, որ մի այլ տեղ ասում է, թէ աւանդութեան համաձայն մի քաղաք Յրօնս (*Seron*) անուանուեց, «բաժանման տեղ», որտեղից ցրուեցին Քախսութեան կամ Նոյի որդիները: Թէ արդեօք տապանի որեւէ մնացորդ կայ, ինչպէս պատմում են տեղաբնակները, չեմ կարող ստուգիւ ասել: Ժեզեֆ Թուրնեֆորը, սրանից ոչ շատ վաղ, մտադրուել էր իր աչքով տեսնել այդ վայրը, սակայն չափազանց մեծ վտանգների եւ դժուարութիւնների հանդիպեց, որոնց միջով պիտի անցներ». քնն *The works of Flavius Josephus*, translated by William Whiston, London, 1737, p. 29: Վամնապութեան համար բերենք Խորենացու՝ Ունիշթօնների լարիներէն թարգմանութեան Նախնաւանին վերաբերող ծանօթագրութիւնը, որ մեր խնդրանք լարիներէնից թարգմանել է Գ. Ննձացեանը. «Պողոմէոսից երեւում է, թէ այս Նախնաւան քաղաքը գտնւում է Արարատեան դաշտից ոչ հեռու եւ մեծ համարում եւ հռչակ ունի Հայոց մէջ՝ իբրեւ աշխարհի հնագոյն քաղաք, որ Նոյը հիմնել է Ջրհեղեղից անմիջապէս յետոյ: [Կղեմէս] Գալանոսը, իր «Միաբանութիւն Հայոց Սուրբ Եկեղեցւոյն ընդ մեծի Սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ» (հատ. 1, էջ 507, 513, 523) աշխատութեան մէջ այնքան ստոյգ է յիշատակում բառը՝ Նախիջեւան, որ հազիւ թէ կասկած առաջանայ, որ սա այն նոյն տեղն է, որի մասին Յովսէպոսը խօսում է տապանի հանգրուանելու կապակցութեամբ». քնն «*Mosis Chorenensis Historiae Armeniacae*», Londini, 1736, p. 71.

դ. Այս և յաջորդ թուերն անգլերէն թարգմանութիւնից են:

ե. Անգլերէն փարբերակում «դրանց» ձեւն է (խաղողների բերքը). կիրառել ենք ռուսերէն փարբերակը:

զ. Ինչպէս քննարկում ենք՝ Չարլզի փառադարձութիւնները ոչ միշտ են համընկնում (հմմտ. *Nêlâtamadâk-Na'eltamadâk* և *Adatanêses-Adâtanêses*): Ջորջ Սքոդդի թարգմանութեան մէջ փարբերում է Քամի հիմնած քաղաքի, հեպտաբար նաև նրա կնոջ անունը՝ *Nêlâta-Mêk*:

Դիպարկոտդ հապուածի շարադրանքից ինչպէսեւ Չարլզի 34-րդ ծանօթագրութիւնից յայտնի է դառնում, որ Յոբելենիցի (նոյնը կարելի է ասել նաև Ծննդոցի կապակցութեամբ) հեղինակը խիստ կողմնակալ է և ամեն կերպ կամենում է Սէմին առաւել ներկայացնել: Բացի Չարլզի մարմանշումից հարկ է նկատել նաև, որ «Յաբելը քննաւ և նախանձեց Քամին և նոյնպէս քաղաք կառուցեց», մինչդեռ Սէմը «պարգապէս» կառուցեց իր քաղաքը՝ առանց «նախանձի»: Դիպրելի է նաև, որ Սէմը և Յաբելը միասին ծածկեցին հօր մերկութիւնը, սակայն Նոյի խօսքում առաջին օրինութիւնը Սէմի համար է. «Եւ ասէ [Նոյ]. «Անիծեալ Քանան մանուկ, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց»: Եւ ասէ. «Օրհնեալ Տէր Աստուած, Աստուած Սէմայ, եւ եղիցի Քանան ծառայ նորա: Ընդարձակեացէ Աստուած Յաբելի, եւ բնակեացէ ի տան Սէմայ. եւ եղիցի

Քանան ծառայ նոցա». Կեն Աստուածաշունչ մատենան, Ծննդ. Թ. 25-27 (ընդգծումը մերն է.-Գ. Մ.): Նայելեն թարգմանության վերջին հատումը էական փոփոխություն ունի. *«Եղիցի Քանան ծառայ նոցա»* կապակցությունն այլոց թարգմանություններում ձևակերպուած է՝ *«Քանանը նրա [Յաբեթի] ծառան կլինի»* կերպով. «Ханаан же будет рабом ему» (Русский Синодальный текст, նոյնն է՝ пер. еп. Кассиана, նոյնն է՝ пер. РБО), հմմտ. ուկրաիներէն՝ «і нехай Ханаан рабом буде йому» (пер. И. Огиенко), հմմտ. անգլ. «Canaan shall be his servant» (King James Version, նոյնն է՝ New American Standard Bible եւն): Թարգմանության հիմք հանդիսացող օրինակում եզակի թուով դրուած դերանուն փոխարինումը յոգնակիով, հանգեցնում է նրան, որ Սէմի անունը կրկնակի է յիշում: Պարզ է, որ փոփոխությունը ծագում է յունարէնից, ուր հէնց «նրանց» (նոցա) ձեւն է (յունարէն բնագիրը՝ անգլերէն բառացիով հանդերձ Կեն <http://apostolic.interlinear.bible.org/genesis/9.htm>): Իսկ թէ երկու բնագրերից որն է ճիշտը, կարելի է պարզել խօսքի շարադրանքից. փողարման 25-րդ համարի թէ՛ ռուսերէն, թէ՛ ուկրաիներէն, թէ՛ անգլերէն (բնական է՝ նաեւ հրեական աղբիւրից օգտուած բոլոր թարգմանություններում) օրինակները հայերէնի հետ համահունչ են. *«Անիծեալ Քանան մանուկ, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց»* (раб рабов будет он у братьев своих, він буде рабом рабів своїх браттям, a servant of servants shall he be unto his brethren): Իսկ յեպրայէ շարադրանքում արդէն հիմնաւորում է «եղբայրների» յոգնակիության հանգամանքը. մէկ անգամ Քանանը յիշում է Սէմի, իսկ յաջորդիւ Յաբեթի օրինության մէջ: Ուշագրաւ է, որ Աստուածաշունչի՝ New International Version (NIV)-ի շարադրանքում երրորդ դէմքի անձնական դերանունը պարզապէս փոխարինուած է Յաբեթ անունով՝ «and may Canaan be the slave of Japheth». Կեն <http://www.biblegateway.com/passage/?search=GEN%209&version=NIV>. այս կերպ, թերեւս, ապահովում է թէ՛ ներքին փոխանակությունը, թէ՛ հարապատասխանը նախնական բնագրին:

Կողմնակալության դրսևորումներից յաջորդը Յաբեթի կամ Սէմի անդրանկության հանգամանքն է, որ Աստուածաշունչում ուղղակիօրէն շեշտուած չլինելով՝ այլեւայլ ուսումնասիրողների կողմից փոփոխականութիւններ է ստացել: Սպառնիչ կարելի է համարել Միքայէլ Չամչեանցի մատնանշումը. *«Այլ բազումք Հայեցեալ ի ճիշդ քննութիւն բանից Սուրբ Գրոց, եւ ի զգուշաւոր թարգմանութիւն երբայական բնագրին, ասեն՝ թէ ո՛չ Սէմ, այլ Յաբեթ էր անդրանիկն: Եւ այսր կարծեաց մեծ եւ զօրաւոր պատճառ է այն, զի Սուրբ Գիրքն ասէ, թէ Նոյ ի 500 ամի իւրում ծնաւ զորդիս. եւ յաւելու, թէ ի 600 ամի նորա եղեւ ջրհեղեղն. եւ ապա ասէ ի զլ. ԺԱ. Համար 10. թէ՝ «Սէմ որդի Հարիւրամեան էր, յորժամ ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ամի ջրհեղեղին»: Արդ՝ եթէ յերաւի Սէմ էր անդրանիկն, եւ յերկրորդ ամի յետ ջրհեղեղին ծնաւ զԱրփաքսադ, պարտ էր ասել, թէ Սէմ էր յայնժամ Հարիւր եւ երկու ամաց (որպէս քաջ քննութեամբ ստիպի դնել Վարդան). եւ կամ պարտ էր ասել, թէ Նոյ էր 498 ամայ ի ծնանիլն զՍէմ:*

Յայս Հայեցեալ՝ անտարակոյս Համարիմք, թէ առաջին որդին՝ զոր ծնաւ Նոյ ի 500

ամի իւրում, ոչ էր Սէմ, այլ՝ Յաբեթ, եւ երկրորդն՝ Սէմ, ծնեալ ի 502 ամի նորա. որպէս զնէ Պետաւիոս...»։ Միքայէլ Չանչեանց, Պարմութիւն Նայոց, հայր. Ա., Վենետիկ, 1784, էջ 146: Տրամաբանօրէն կազմուած այս շղթան պէտք է աւելի վստահելի համարել, քան Յոբելենից գրքի՝ թերեւս նպարակային կերպով արուած յիշարակութիւնը, համաձայն որի հինգերորդ եօթնեակի երրորդ տարում ծնունդ Սէմը, հինգերորդ տարում՝ Քամը, եւ միայն վեցերորդ եօթնեակի առաջին տարում՝ Յաբեթը. տե՛ս Յոբելենից գիրք, գլ. Դ. 33: Պէտք է կարծել, որ կողմնակալ շարադրողները կարող էին, ասենք, թուարկութիւնների ժամանակ մշտապէս փոխել աւագ եւ կրտսեր որդիների անունների տեղերը, սակայն այն տրամաբանական եզրակացութիւնները, որ բխում են շարադրանքից, վրիպել են նրանց աչքից՝ այս կերպ պահպանելով պատրուի նախնական ձեւը:

Է. Ռոս. չիք «ամբողջ եղեմական աշխարհը եւ»:

ը. Ռոսերէն թարգմանութեան մէջ՝ Баша (երբ. ܒܫܐ—ha-Bashan, անգլ. Bashan կամ Basan), որ այդ լեզուի համար ուղղելի է Bacaн (տե՛ս Թ-իւր ԻԱ. 33): Բասանը «էր բլրային երկիր Պաղեստինու մէջ». հմմտ. «Բառարան սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881:

թ. Անգլ. Kaphur ուղղելի է՝ Caphor (տե՛ս Եր. ԽԷ. 4): Ըստ որոշ աղբիւրների՝ Կափթորը կապում է Եգիպտոսի կամ Կիլիկիոյ հետ. տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Caphor>: «Բառարան սուրբ Գրոց»-ը «Կափթորացիք» յօդուածի ներքոյ նշում է. «Բայց թէ այս գաղթականութիւնը (կափթորացիք.- Գ. Մ.) Կիպրոսէ եկաւ, թէ Կրետէէ կամ ի Կապադովկիոյ՝ յայտնի չէ»:

ժ. «Սանիր, Ներմոն լեռան տրուած անուն մը». տե՛ս «Բառարան սուրբ Գրոց», էջ 484: *Ամանա* անունը չկայ հայերէն Երգ Երգոցի բուն շարադրանքում, սակայն առկայ է տողարկում. տե՛ս «Աստուածաշունչ մարեան Նին եւ Նոր Կտակարանաց», Նայասարանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997, էջ 703: «Անդիլիբանան լեռանց հարաւային մասին կամ գագաթան անունն է, Ներմոնի կից եւ անոր հիւսիսային կողմը: Ասկէ կը հոսէր Ամանա կամ Աբանա գետը դէպ ի Դամասկոս». տե՛ս «Բառարան սուրբ Գրոց», էջ 26:

ժա. Անգլ. «Mâ'êdâi», օգտուել ենք ռուսերէնի «Мадаи» ձեւից, որ Ծննդ. Ժ. 2-ում (նաեւ Ա. Մ'նաց. Ա. 5) հանդիպող՝ Յաբեթի որդիներից Մադան է (Մադայ):

ժբ. Մեր անվաներներից մէկում կարդում ենք. «Եւ անուն տեղւոյն կոչեցաւ Նախիլեան. եւ այն է Գերեզման Նոյի». տե՛ս «Թանգարան հին եւ նոր նախնեաց», էջ 324:

ժգ. Չարլզի թարգմանութեան մէջ 33 է. Նախընտրել ենք ռուսերէնը՝ համադրելով Սքոդդի եւ ֆրանսերէն օրինակների հետ. «Et dans la 1^e année de la 2^e semaine du 34^e jubilé, Peleg prit pour lui une femme dont le nom était Lomna...». տե՛ս «Le Livre des Jubilés, Moïse, Version française intégrale», Copyright © 2010 Filbluz éditions, էջ 28:

ժդ. Ռուսերէնում չիք *երկրից*:

ժե. Անգլ. «Յառաջ. եկէ՛ք դրանով երկիրք բարձրանանք»: